

ՆՈՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ



891.99
G-15
Ա. Ռ. Ա. Կ. Ն. Ե. Ր.
Յ. Ե. Վ.
Զ. Ր. Ո. Ի. Յ. Յ. Ն. Ե. Ր.

ՀԱՅ ԳԵՏ ՀՐԱՑ

30 MAY 2011

891.99

2-15

ՆՈՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐ

ԱՌԱԿՆԵՐ ՅԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Նկարները՝
ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Պատ. խմբագիր՝ Հո. Պողոսյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբազրիչ՝ Ս. Փարսադանյան


НОРИК НАЗАРЯН
БАСНИ и БЕСЕДЫ

ГИЗ Арм. ССР, Ереван, ул. Ленина, 65



1164
40

Գլավրիտի լիազոր՝ Զ—1017 Հրատ. 4989.
Պատվեր 3. Տիրած 3000.
Թուղթ 62×94. Տպագրական 3 1/2 մամուլ.
Մեկ մամուլում 24,480 նշան.
Հանձնված է արտադրության 2 հունվարի 1940 թ.
Ստորագրված է տպագր. համար 21 հունվարի 1940 թ.
Հայտեանդատի I տպարան, Յերևան, Լենինի, 65.



1. ԱՐՈՆ


1.

Պատմում են, թե
Մի հին շենում
Մի ձկնորս եր
Վաղուց կենում.
Անունն Սբո՝
Միջահասակ—
Գլխին զրած
Կարմիր թասակ:

2.

Գարուն գալիս՝
Մեծ ձնհալին
Գետն եր տալիս
Ալին-գալին,
Գալարվում եր ողակ-ողակ:
Քնից յեղած իշխան, կողակ,
Սև, կարմրախայտ, վրձնալողակ,
Շիրմահիներ քարերի տակ—
Շշմում եյին ու կուրանում...

Աբոն իր «խիղճը ուրանում»—
 Վոտքը քշտած,
 Թևերը բաց,
 Ման եր գալիս,
 Զուկ խաղալիս՝
 Պղտոր գետում
 Թողը նետում,
 Զուկ եր հանում
 Տուն եր տանում:
 Շուտով ամառն եր մոտենում.
 Զուրն իջնում եր ու քշանում:
 Եզ ժամանակ, թեկուզ զոռով,
 Զուկ չեր վորսում Աբոն թողով—
 Այլ չիվերից ցանց եր հինում,
 Մի գեղեցիկ մաղալ* շինում
 Բար եր կրում,
 Պատ եր շարում,
 Զիմ** հավաքում,
 Անցքը փակում:
 Զուրն յեկնում եր, ուռչում, չափվում
 Ու մաղալի վրան թափվում.
 Ալիքները
 Գնում եյին,
 Իսկ ձկները
 Մնում եյին:
 Աբոն արդեն տուն չեր գնում՝
 Իր մաղալի մոտ եր քնում,
 Վոր բախտը բանի՝
 Շատ ձուկ տանի,



* Մաղալ—վոստերից հյուսած ցանց—ձկնորսության հա-
 մար:

** Զիմ—ձումբ:

Շուկա հանի,
Ապրուստ անի...

3.

Մի գիշեր ել, գետի ափին,
Աբոն պառկած քարոտ տափին,
Յերկնքի տակ խաղաղ, անուշ
Քուն եր մտել, քնել մոռ, մոռ...
Գետն եր գալիս, գնում անվերջ...
Մին ել, Աբոն, յերազի մեջ
Ձեռը գցեց, շուրը խառնեց,
Մի սիրունիկ ձկնիկ բռնեց:
Ձուկը հանկարծ լեզու առավ,
Աղաչելով իրեն դառավ.
— «Արի ձկնորս,
Բարի ձկնորս,
Ինչո՞ւ յես մեզ ջրից հանում,
Անմեղ աեղը,
Մեր խեղճ ցեղը
Ծարավ թողնում և սպանում:
Մի խոսք ունե՞մ թե ընդունես՝
Դու մի վսեմ արվեստ ունես—
Ահ, յերկյուղը
Ձուրը թափիր,
Գնա գյուղը,
Մի լար կապիր,
Կանչիր զուռնա և նաղարա,
Վեր կաց լարին ու խաղ արա:
Ա՛յ չորս կողմից, ինչպես հողը,
Քեզ կընեաեն դատած փողը:
Թե չես եսպես
Ի՞նչ ոգուտ քեզ՝

Թողը սորես*)
Մեզ կոտորես...»


4.

Հանկարծ հաջեց ջրի շունը,
Աբոն զարթնեց՝ փախավ քունը:
Բռնած ձկներն շալալն առավ,
Դեպի իրենց գյուղը դառավ:
Հասավ տունը, գրկեց մանկան
Ու յերազը պատմեց կնկան:
— Վայ ջանիկս,—ասավ կինը,—
Թանկ ե քո յերազի գինը.
Աստված գիտի, փոր արդար ես՝
Ձկան բերնով ասել ե քեզ
Գաղանիքները լարախաղի...
Դե շուտ արա, ել մի պաղի.
Ինչ տեսել ես դու յերազում,
Եղ բանը քեզ լավ ե սագում:
Մեծ շնորհք ե, հո վատ բան չի,
Գնա գյուղի մարդկանց կանչի,
Խոստովանիր տերտերի մոտ,
Ու վեր խաղա հենց առավոտ»:

5.

Ել ցերեկվան նա չապասեց,
Յեվ տերտերի տունը վազեց,
Նրան տեսավ.
— Տեր հայր,—ասավ,—
Մեր գետափին,
Քարոտ տափին,
Ես իրիկուն,
Յերբ մտա քուն,

*) Սորես—լարես:



Յերազիս մեջ տեսա մի ձուկ
Յելավ, հետս խոսեց ծածուկ.
Թե—այ ձկնորս,
Ի՞նչ ձկան վորս՝
Դու մի ենաես
Շնորհք ունես,
Վոր լավ պահես՝
Գանձ կըշահես»—

— Տեր հայր, հիմի
Գրիգ զիմի,
Թե ի՞նչ ե սա,
Վոր յես տեսա:

— Սրբոց ուժն ե, ով վորդյակ,
Պահապանը քո միակ.
Խոսկան ձուկը չի կեղծել՝
Տերն—ինքն ե քեզ ստեղծել:
Այսոր վեր կաց ու խաղա՝
Գլխիդ վոսկի կըտեղա»:

6.

Յերբ բարձրացավ թոնրի ծուխը,
Չավը բռնեց ամբողջ գյուղը:
Իսկույն ժամկոչ
Ծառուրը
Յելավ ժամի
Կառուրը:
Ձանգերը ձիգ զողանջեցին
Յեվ գյուղացոց դուրս կանչեցին:
Մարդիկ թողած բան ու գործ,
Հենց անտեղյակ ու անփորձ,
Խայտառղեստ խմբերով
Թռան քուչի թմբերով
Հավաքվեցին գյուղամեջ:
Գյուղամիջում

Մեկը վիճում,
 Մեկն ել գալիս
 Հույս ե տալիս...
 Մին ել տեսա՝
 Աներ, փեսա,
 Քեռի, քավոր ու սանիկ
 Յեկան ծեսով
 Ու հանդեսով՝
 Ասես լիներ հարսանիք...
 Կալում մի տեղ փորեցին,
 Յերկու գերան հորեցին,
 Մի հաստ պարան չափեցին,
 Գերաններից կապեցին:
 Հանդես բերին Աբոյին
 Յեվ ծաղրածու Գաբոյին:
 Եղտեղ տերտեր, տիրացուն
 Են քյանդրբազ դրացուն
 Տարան խորան թաղցրին,
 Նախշուն շորեր հագցրին,
 Մեջքը կապին խառ գոտին
 Թաղաթ* տվին գույզ փոտին,
 Շալվարի տեղ՝ ալ վարտիկ՝
 Վրեն շարած զառ բթիկ...
 Հազար գուքսով թամբեցին
 Հրապարակ ճամբեցին...

7.

Յերբ դուրս գնաց
 Աբոն ժամից,
 Տերտերն առաց
 Միանգամից.

* Ութ—կարողութուն:

— Ա հեր որհնած, հլա մի տես՝
 Աբոն մի նոր գյուտ ե, գիտե՞ս:
 Թող նա ջարդի իր կողերը:
 Մենք հավաքած փողջ փողերը
 Ձեռից կառնենք, կաանք ժամին,
 Կասենք—Աբո, ես անգամին
 Վաստակդ թող յեկեղեցուն,
 Աղոթք արա դու ասածուն,
 Վոր քեզ ոգնի տերը վերին,
 Զորություն տա քո ծնկներին,
 Դու չդողաս լարի ծերին—
 Հետո հեշտ ե փողը հանել,
 Ժամից տանել
 Անուշ անել»:
 Տիրացուն թե «այո, տեր հայր,
 Մեր ցանցումն ե Աբոն տկար»:

8.

Աբոն սրտի դողոցով
 Վազեց ժամի փողոցով,
 Շքեղ գուզված ու պատրաստ,
 Յեկավ կանգնեց գոհ, զգանա:
 Պաղ շուր խմեց նա մի փարչ,
 Ձեռով սրբեց բեխը կարճ,
 Դոշը ցցեց,
 Վոտքը գցեց,
 Շատ սրբերի անուն տվեց,
 Մինչև քյոսան* փայտը տվեց:
 Նա փոչ բարով
 Յեկավ լարով
 Մի քիչ դողաց,

* Քյոսան—ծաղրածու:

Մեն ջած սողաց:
 Լավ եր քյոսան
 Առավ բոսան*,
 Փեշը կանեց
 Վոտի հանեց
 Ծիծաղ, ոյին
 Մեր Աբոյին:
 Հրհռացին բոլոր մարդիկ:
 Բայց մեր Աբոն լուռ, հանդարտիկ,
 Լարի տուտը ձեռին կծկեց
 Պիրկ պարանի վրեն ցատկեց:
 Ամբարտավան
 Տերտեր, քյոխվան
 Դհուլ, զուռնա բերեցին
 Ու մեյդանը քերեցին:
 Սազանդարներ չոքեցին
 Յեղանակներ քոքեցին:
 Գաբոն առավ մի փափախ,
 Փող հավաքեց անհապաղ...
 Հարց են տալիս ամեն կերպ.
 «Յերբ կըպարի, յարաբ, յերբ»:
 — Աբոն յելավ
 Հա յելավ.
 — Աբոն խաբվեց՝
 Թող ելավ:
 Աբոն վոտքը փոխեց առաջ.
 Բերնից թռավ ծանր հառաչ:
 Մին ել ձեռքը տարավ ունքին.
 Ընկավ քյոսի ճիշտ թիկունքին:
 Մին ել յելավ, ընկավ նորից
 Ու ես անգամ բռնեց փորից.

* Բոսան — լառախաղի գործիք:

— Աման փորըս, աման մեռա:
 — Հարկավոր ե սոխի յեռա,—
 Սիրտ են տալիս մարդիկ նրան
 Ու ծիծաղում միաբերան.
 Աբոն կրկին վոտի յելավ,
 Իր շորերը շակեց մի լավ,
 Ու զուռնաչուն առավ «Կալա,
 Հիմի փչի կարմիր լալա»:
 Յերբ զուռնաչին զուռնան զեց,
 Քույրը յեղբոր փեշը խլեց,
 Չեռ պաչեց
 Ու աղաչեց.
 — Այ իմ Աբո, իմ լավ ախպեր,
 Յեկ ձեռ քաշիր, ինձ ել միտ բեր.
 Խաբում են քեզ՝ փորձանք կա, հա,
 Մաղից ե կախ կյանքդ ահա»:
 — Սուս կաց, ախչի,
 Աբոն խամ չի,
 Ինչ ես ճշում,
 Սուտ-սուտ փչում:
 Ասավ քյոխվան չար հանաքով
 Յեվ սպառնաց իր գանակով...
 Աբոն կանգնեց
 Քյոսին ձայնեց.
 — Յերկու պղինձ
 Հասցրեք ինձ:
 Պղինձները
 Վոտքը կոխեց
 Յեվ քայլերը
 Առաջ փոխեց:
 Յերերվելով հասավ վերև
 Ու գողգողաց ինչպես տերև:

Ծափ զարկեցին մարդիկ ժպտուն,
 Իսկ խեղճ Աբոն սուս, անծպտուն,
 Զուլում վախից դույնը գցած,
 Տէս, տէս բարձրից նայում ե ցած:
 Ու նա իրեն,
 Շարժեց նորեն
 Ուզեց պարի, դողաց, ծովեց
 Յեմ... գլխիվար գետին փովեց...
 Տերտերն իսկույն նրան ձեռքեց.
 «Մեծ զարմանքով» խաչակնքեց:
 Կինը վազեց մարդկանց միջով
 Ընկավ վրան մի սուր ճիչով:
 Բայց գյուղացիք չսպասեցին
 Զորս կողմիցը փայտ քաշեցին.
 Իրար խառնած տերտեր, քյոխվա՝
 Խիստ ծեծեցին զեղ-զեղովի.
 Ուստին արին հարած մերան,
 Հայհոյեցին միաբերան...
 Քույրը նետվեց
 Մարդկանց վրան,
 Թքեց, մրեց
 Սրան-նրան:
 Զանչեց քյոխվին
 Ու տերտերին.
 — Ախ, մեր գլխին
 Եղ ինչ բերին.
 Այ դուք լրբեր,
 Սուտլիկ սրբեր,
 Կեղծ խոսքերով մարդ եք խաբում.
 Յեկած փողը դուք եք լափում:
 Այ սեվաշոր
 Սեփերեսներ,

Կառնեք մի որ
 Պատիժը ձեր.—
 Զարկեց ծնկան
 Դարձավ կնկան:
 — Հողս գլխիդ, ինչո՞ւ թողիր
 Մարդուդ արին հող ու մոխիր»:
 Կինն Աբոյին տեսավ ընկած,
 Սիրտը լցվեց ու փղձկաց:—
 Հասավ զրկեց,
 Ծեծից փրկեց.
 Կրծքին սեղմեց
 Ցավը մեղմեց...
 Մարդիկ խղճից նահանջեցին,
 Իրենց փողը պահանջեցին:
 Տերտերն աջը թափահարեց,
 Դարձավ կտրուկ, հայտարարեց.
 — Խաղաղություն ամենեցուն՝
 Փողը մնաց յեկեղեցուն»:

9.

Զարդված Աբոյին
 Դրին անկողին՝
 Զորս տարի պառկեց
 Ընկած մի կողին:
 Ել չառողջացավ,
 Մնաց խեղճ, ցավոտ,
 Անունն ել դրին
 «Մշու փետավոտ»:




2. ԶԱՆՈՒ ՊԱՐԸ

Ամռան անուշ արշալուսին
 Զանին ճաշը դրած ուսին՝
 Հաց եր տանում հանդը քեռու,
 Վոր ընկած եր գյուղից հեռու:
 Շնկչնկում եր թեթե քամին,
 Յորնի արտերն ալեկոծում
 Ու քայլում եր ուրախ Զանին
 Ճոխ բնության ազատ ծոցում...
 Շուտով հասավ
 Դաշտի միջին:
 Կորավ գյուղի
 Ծայրը վերջին,
 Ու կանգ առավ
 Զանին մենակ,—
 Տեսավ բզեզ,
 Բոռ, պրպենակ.
 Խավարասեր,
 Զիթնուկ, կրեա,
 Պապուկ, սև ճանճ,
 Իր դեմ հրեա
 Կովի թրքից գունդ են անում
 Գլգոր-մլգոր բունը տանում.
 Ու հետ գալիս,
 Թևին տալիս՝

Թռչկոտում են, բզզում, պարում,
 Թեփկները թափահարում...
 Տարված Զանին չըդմացավ,
 Ականջ արավ ու վեր կացավ,
 Են միալար տղգոցի տակ,
 Սիրտը խայտաց խինդո լ անտակ,
 Հովին տված ծամերն արձակ՝
 Պարեց անփույթ ու համարձակ:
 Վիզն ել թեքեց,
 Հանկարծ յերգեց.
 — «Զան, բլոճիկ, զան,
 Պարեր զանազան,
 Յես կաշեմ խաղ՝,
 Ճաշիկ, զու պաղի»:
 Ու մոռացած
 Ճաշ ու հնձվոր՝
 Զանին պարեց
 Մինչև կեսոք...

Յեթե ենպես քաղցր որ եր՝
 Ասեք—Զանին մեղավոր եր:





3. ԾԻՏՆ ՈՒ ԾԻԾԱՌԸ

Խաղաղ ու խոր
 Մի աշնան որ
 Ճկճկում էր
 Ծիտը ծառին
 Ու կանչում էր
 Ժիր ծիծառին.
 — Պուճպուճուրիկ,
 Ծիծառ քուրիկ,
 Ե՞ր ես շրջում
 Մուրիկ-մուրիկ:
 — Իմ լավ ծիտիկ
 Եղտեղ տիտիկ՝
 Չե՞ս իմանում
 Ինչ եմ անում:—
 Ման եմ գալիս,
 Իմաց տալիս.
 Բալբի շուտով
 Մայր ու ճուտով
 Թռչենք գնանք
 Դեպի հարավ,

Վոր չըմանք
 Սոված, ծարավ...
 Ես ե՛՛ ճերմակ
 Մի մեծ վերմակ
 Կառնի իր տակ
 Զրեր հստակ,
 Կանաչ մարգեր,
 Լեռան շարքեր՝
 Ել ի՞նչ ոգուտ,
 Ո՞վ կտա կուտ»:
 — Հապա ինչպե՞ս
 Պիտ ապրեմ յես»:
 — Վճճ իմ աչքին՝
 Գիժ ես կարգին.
 Արի մեզ հետ
 Թռչենք անհետ
 Թեթև, անփուլթ
 Ողով կապույտ.
 Անցնենք հովով
 Անհուն ծովով,
 Հասնենք աշխարհն են դալար,
 Ուր հովտում պերճ
 Հավքերն անվերջ
 Գեղգեղում են միալար»:
 — Այ ժրաջան,
 Ազիզ քուր ջան,
 Հենց յես ել ճիշտ
 Ուղում եմ միշտ
 Ֆրտերից զատ
 Ապրել ազատ.—
 Բայց թեվերս թույլ են, տկար՝
 Յես չեմ կարող թռչել յերկար:

Ինքս այստեղ կապրեմ տարով,
Իսկ դու, քույրիկ, գնաս բարով»։

* * *

Թիթեռ, բզեզ, մեղու, շերամ
Իրար քնի տվեցին,
Թռչունները յերամ-յերամ
Թռիս յերկնքով չվեցին...

* * *

Ծիտը գնաց ընկերներին
Տվեց լուրը ցուրտ ձմռան.—
Մի-մի հատիկ բերաններին՝
Ծլվլացին ու թռան,—
Թռան գեպի հանդը ցիրցան
Մտան մարագ, ջրադաց,
Խմբով ել յետ գյուղը դարձան...
Բուքը սուլեց ու խաղաց...

* * *

Յեկավ դարուն
Թարմ ու սիրուն,
Հագավ կանաչ
Դաշտը ճանաչ,
Միջատ, մրջուռ
Գործի անցան,
Հավք ու թռչուն
Վերադարձան...

* * *

Ծիծառը մեր սևիկ-մևիկ
Բացեց ոգում իր զույգ թևիկ

Անցավ ձորից,
Այգին մտավ,
Ծիտիկն նորից
Այնտեղ գտավ:
— Իմ անուշիկ,
Պատմիր հուշիկ,
Թե դու ինչպե՞ս
Պահեցիր քեզ»:
— Կյանքս տո՛ն եր՝
Մի պիոներ
Թշերն ալիկ
Սիրուն բալիկ—
Սեղան շինեց
Կուտիկ ցանեց,
Հանեց մեխեց,
Ծառից կախեց:
Հերանք-մերանք
Կուշտ-կուշտ կերանք,
Հագնվեցինք,
Թագնվեցինք...
Պիոներները ժիր են, բարի՝
Մեզ կպահեն ամեն տարի...
Ընկեր ճարի՝
Դույել արի,
Բներ զենք են տանիքին,
Ճլվլալով,
Ծլվլալով,
Ուրախացնենք ընտանիքին...
Վաղ արթնանանք
Հովի հեվով,
Թռչենք, գնանք
Թեթև թևով:

Այգին ծաղկոտ
 Ու ծիծաղկոտ—
 Թրթուրներից խտակենք,
 Առնենք դասեր՝
 Աշխատասեր
 Մարդու անուն վաստակենք...»



4. ԱՆՀԱՂԹ ԵՇԸ (Ժողովրդական)

Ծագեց գարնան
 Արևը ջերմ,
 Նոր շունչ առան
 Ծառ, ծիլ ու սերմ:
 Դարձավ սելավ
 Ջրունը քնած.
 Եղբ յելավ
 Ու դաշտ գնաց:
 Մեկին տեսավ.
 — Հերիք մնամ,
 Փախչեմ,—ասավ,
 Յայլաղ գնամ,
 Բալքի զատվեմ,
 Հենց աղատվեմ
 Մարդու ձեռից
 Ծեծ ու բռնից: —
 Ասավ եղբ
 Խեղճ ու անբան,
 Հայդե, բռնեց
 Սարի ճամբան:
 Դունչը ցցեց
 Ձենը գցեց
 Ուրախ, կայտառ
 Հասավ անտառ...

Մին ել, ըհը՝, ծառի տակին
 Արջը բրդոտ ու ահագին,
 Դուրս ե յեկել են լավ որին,
 Քոթոթներին ժողվել փորին,
 Քոլոլվում ե ու շուռ գալիս
 Մեկն ու մինին թաթով տալիս,
 Խաղ ե անում
 Ուրախանում...
 Եջը հասավ
 Սրտանց ասավ.
 — Բարև, քեզ, արջ»:
 — Հազար բարի, այ քավոր եշ,
 Տուն ու տեղս քեզի փեշքեշ.
 Հարցները ամոթ չի՝
 Մեր կողմերում եզ խեր ըլի—
 Եսպես մենակ
 Անժամանակ:
 — Եհ սանիկ, դե
 Տերը գիտե՝
 Քեզնից պահեմ,
 Ի՞նչ տի շահեմ:—
 Ձեռ եմ քաշել գործից, բանից
 Ու փախել եմ թագուն տանից:
 Թե վոր կուզես՝ դու ել արի,
 Յայլադն երթանք մոտիկ սարի.
 Ինձ կերակուր՝ խոտ, փուշ ու քոր,
 Իսկ քեզ համար՝ վորսը բոլ-բոլ:—
 Են ժամ անշուշտ,
 Թե դու, թե յես
 Կլինենք կուշտ
 Ու խնդերես:
 Արջը թե—լավ,

Գործը յեկավ.—
 Մարդ ել չկա մեզնից բացի:—
 Դե հիմի դու մի քիչ կացի՝
 Քոթոթներին իմաց անեմ,
 Ու վերջնական վճիռ հանեմ»:
 —

Արջը նրանց ասավ «բալեք,
 Բունը մտեք դուռը կալեք
 Ու խաղ արեք տաքուկ բնում:
 Հենց վոր դառնամ՝
 Յես կըբանամ.
 Քավորի հետ տեղ ենք գնում»:
 —

Արջը յեկավ, թե շատ բարի,
 Քո ընկերն եմ մի վողջ տարի:
 Իշուկը թե—հապա, ջանս,
 Յես լավ գիտեմ գործ ու բանս՝
 Մեր տանեցիք դես վոր եկան՝
 Վոչխար կըտամ քեզ որեկան»:
 —


Եշն ու արջը ես անգամ
 Արդեն զարձան բարեկամ:
 Իրար շորեր քոնեցին*
 Սարի ճամբան բոնեցին:

Մին ել արջը մըթմըթան,
 Ասավ—մոտիկ, քավոր ջան,
 Եսպես վոտով, վոր գնանք,
 Շատ նեղություն կտենանք...
 Դու վեր, նստիր իմ մեջքին՝
 Իսկ եստեղից, վայրեջքին՝

* Քոնել—կարել, կարկատել:

Հանեմ սարի քալազը*
 Իսկ ենաեղից, վայրեջքին՝
 Յես նստեմ քու շալակը:
 — Լավ ես ասում, սանիկ արջ,
 Արի պայման կապենք կարճ...

Ե՛լը հեծավ զոռալով,
 Արջը յելավ նոռալով,
 Քրտինք պատեց ճակատը
 Մինչև հասավ գագաթը:
 Ե՛ն իր պոչը թափ տալով,
 Արջից պոկվեց ժպտալով:
 — Դե վեր հեծի, զոչազ արջ,
 Տանեմ անփող ու անխարջ:
 Արջուկն իրեն դրստեց,
 Յելավ ե՛լին պինդ նստեց:
 Ե՛ն սկսեց
 Քեկքը մանր՝
 Մե՛ջքը կզեց
 Բեռը ծանր: —
 Վոչ դեն, վոչ դես,
 Գժվածի պես
 Բոռաց մեկ ել.
 — Ո՞ւր եք սարեր,
 Անբան քարեր՝
 Ձեզ եմ յեկել»:
 Յեվ կես ճամբին
 Նայեց ամպին
 Մեր խենթ-խուլուշ սևականջը —
 Քացի, քացի, —
 Քացուց բացի՝



* Քալազ—սարի գլուխը, դիքը:

Զլեց իր գեշ իշականջը...
 Յնցեց յալը*
 Զնգաց նալը:
 Ու չորս փոտով,
 Ասես ողով,
 Վոր զառիփայր սլացավ,
 Արջը փախից՝
 Կպավ յախից,
 Իշու ձենից խլացավ:—
 Մեկ ել գրմփաց,
 Վայր թըրմփաց,
 Իրմզմբալով ձորն ընկավ,
 Աչքը շաղվեց,
 Խելքը մաղվեց,
 Շունչը փչեց ու հանգավ...

Եջը խրանած
 Հոգնած, քրանած,
 Իջավ ձորը,
 Պնդեց փորը**
 Ապա հասավ,
 Արջին ասավ.
 — Ա՛յ քոթուկ արջ,
 Ա՛յ խելքը կարճ.
 Քու ճակատին
 Եդ եր գրած,
 Վոր գագաթին
 Վոտ չըզրած,
 Վայր ցատկեցիր
 Ու սատկեցիր:

* Յալը — բաշը:

** Փորը պնդել — լի ու լի ուտել:

Վանյ քու որին,
 Վանյ-վանյ, վանյ-վանյ,
 Գայլի փորին
 Դարձար սեծ փայ.
 Այ իմ սանիկ,
 Այ իմ ջանիկ,
 Յես քու մահով՝
 Այժմ ապահով
 Կերթամ հիմի,
 Թողած մի-մի
 Զիզրի մամուռ.
 Հուշեր տխուր,
 Այսուհետև
 Անհոգ, թեթև,
 Ամենքից զատ
 Կապրեմ ազատ:—
 Ասավ, նորից ուրախ, անբան,
 Բռնեց մոռիկ սարի ճամբան:
 Թեև որը մի քիչ շոգ եր,
 Բայց իշուկի քեֆը քոք եր*...
 Շատ գնաց՝ քիչ՝ ինքը գիտեր՝
 Ինքն եր մենակ իր գլխի տեր:
 Դեմից մեկ ել
 Յելավ մի գել,
 Ու հենց աչքը եշին տեսավ,
 Ուրախ-ուրախ վրա հասավ:—
 Ուզեց արքով
 Մի հնարքով
 Լեզու թափի,
 Իշին խաբի...

* Քեֆը քոք — քեֆը չաղ:

— Քրոջ տղա,
 Բարե՛վ ինչպե՞ս
 Մեզ միտ բերի՛ր
 Ու յեկար տես:
 Քեռին մեռնի
 Քրոջ մանչին,
 Նրա յերկար
 Զուխտ ականջին,
 Նրա չաղլիկ
 Ճերմակ դոշին.
 Գլխիս լինի
 Վոտիդ փոշին:
 Ի՞նչ լավ ե վոր
 Քեռի, յեգյան
 Անմարդ դաշտում
 Իրար յեկան.—
 Յես քո ծառան,
 Յես քո շունը՝
 Դե համեցիր
 Գնանք տունը»:
 Ելլ տեսավ,
 Վոր փորձանք կա,
 Վոր չար գայլից
 Պրծում չկա,
 Ասաց.—Քեռի,
 Պատմեմ քեզ ճիշտ,
 Յես դեռ հնուց
 Ունեմ մի վիշտ»:
 Քեռին ասաց.—
 — Զարըդ տանեմ,
 Ասա, գոնե
 Մի ճար անեմ:

— Յես փոքր եյի,
 Դեռ մի քուռակ՝
 Տերըս կամքիս
 Խիստ հակառակ,
 Տակս սալեց,
 Պոչըս քաշեց,
 Պայտար բերեց,
 Վոտս նալեց,
 Ամա մի մեխ
 Ծովեց, ծովեց
 Ու մինչ վոտիս
 Միսը խրվեց,
 Հիմա եսպես
 Ուռել ե տե՞ս...
 Լսել եմ վոր
 Պայտազործ ես՝
 Ի՞նչ կլինի
 Ուժըդ փորձես՝
 Նալս քանդես
 Մեխը հանես՝
 Հանգստանամ,
 Սիրտս բանամ.
 Դե շուտ գրկիր
 Ցավից փրկիր»:
 Գայլը եղի հետեն անցավ,
 Բացեց բերան ու կռացավ,
 Վոր ուժ անի,
 Մեխը հանի...
 Իսկ եղն ինչքան վոր ուժ ուներ՝
 Վողջ հավաքեց, տվեց վոտին,
 Մինչ նալբանդը մեխ կըհաներ՝

Վոր չըտվեց չոր ծնոտին,
 Մեկ ել տեսանք են խեղճ քեռուն,
 Արնաշաղաղ ընկած առուն...
 Քեռին լալով,
 Մղկտալով,
 Սրտապատառ
 Փախավ անտառ: —
 Քիչ շունչ առավ, չափեց, դատեց
 Ու ինքն իրեն խիստ նախատեց. —
 — Պապենական՝ ե՛ն գլխից դեռ
 Մսագործ ես յեղեկ, անտեր,
 Հիմի քեզ ո՞վ նալքանդ կարգեց,
 Վոր ե՛ղն եսպես ոյին սարքեց»:



5. ԱՐՁՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Աղվեսն ընկավ մի մեծ հոր,
 Բայց ի՞նչ անի, շատ ե խոր,
 Կանգնեց վոտքի,
 Ուզեց ցատկի,
 Բայց վախեցավ
 Ընկնի սատկի:
 — Այ քեզ փորձանք, վրձնց անեմ,
 Բա յես աղվեսը լինեմ՝
 Ու ես հորից դուրս չելնեմ...»:
 Մին ել յեկավ մի հատ արջ,
 Ինքն աժդահա՝ պոչը կարճ.
 — Աղվես, հորում ի՞նչ կանես.
 — Մեղը եմ հանում, չգիտե՞ս,
 Պապս ինձ շատ ե սիրել՝
 Մի կարաս մեղր ե հորել.
 Իջիր շուտով
 Քանդիր թաթով,
 Հանենք,
 Տանենք
 Լավ քեֆ անենք»:
 Ես խոսքերից խենթացած,
 Արջը հորը թրմփաց...
 Աղվեսն ելավ
 Արջի մեջքին,

Դուռն չը մեկնեց,
 Ծռեց ազին,
 Մի վոստյունով
 Թռավ հորից
 Ու հետ դառավ
 Խոսեց նորից.
 — Դե, արջ ախպեր
 Մնաս բարով,
 Ազատվեցի
 Քու պատճառով»:
 Արջը հորից՝
 — Ուրեմն եղպե՞ս.
 Աղվեսը թե՛
 — Ուղիղ այդպես:



6. ՎԱԳՐՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ահեղ վազրը կատվին տեսավ,
 Իր մոտ կանչեց եսպես ասավ.
 — Ինչքան վոր քեզ
 Տեսնում եմ յես՝
 Ելի են ես,
 Ելի են ես:
 Մարդ չի ասում
 Մեր զեղիցն ես,
 Մարդ չի ասում
 Մեր ցեղիցն ես.
 Եսպես պուճուր,
 Եսպես լղպոր,
 Քեզ վոնց ասեն
 Վազրի թոռ»:
 Այ տնաշեն մի մեծացիր,
 Պապիդ նման հսկա դարձիր,
 Նրա նման անուն հանիր,
 Վոր ասեմ թե պետք ես բանի:
 — Ե՛, պապի ջան,
 Զիլ ես կանչում,
 Դու մարդուն զեռ.
 Չես ճանաչում,
 Թե լինեյիր դու իմ տեղը՝
 Կըհալվեր քո սրտի յեղը:

— Ի՞նչ ես ասում, թողնիկ կատու,
 Ո՛ւր ե մարդը, մի ձեռս տու՝
 Ենպես հանեմ
 Նրա հոգին,
 Վոր դողդողա
 Թաթիս տակին»:
 Կատունն ասաց.
 — Այ անտառը,
 Վազրն ել թե՛
 — Գնանք, գառըս»:
 Յե՛վ յերկուսով անտառ մտան
 Մի փայտահատ մարդու գառն»:
 Վազրն ասաց.
 — Բարե՛վ, մարդ.
 Քեզ հետ հաշիվ
 Ունեմ բարդ:—
 Դուք միշտ տեղին,
 Անտեղի,
 Չարչարել եք
 Մեր ցեղին,
 Ել չեմ թողնի, փոր կատուն,
 Ձեզ մոտ ապրի,
 Ու գա տուն:
 Բայց մեր գործը ես բանում
 Դրանով չի վերջանում—
 Յես յեկել եմ պայքարի:
 Մարդը ասաց.
 — Շատ բարի,
 Միայն մի քիչ
 Համբերի»:
 Մարդը ծառին
 Մի ձեղք արեց,



Հետո մեջը
Մի սեպ զրեց,
Յերբ ամեն ինչ կարգի բերեց,
Ահեղ վազրին հրավիրեց.
Ասաց.—վազր, մոտ բեր թաթղ—
Թե ճեղքեցիր դու ծառը ես՝
Հալալ լինի ծծած կաթդ,
Կըհամբուրեմ ճակատդ յես:
Յերբ վերջանա
Գործը մեր ես,
Հետո կանենք
Ինչ վոր կուզես...

Վազրն իր հուժկու
Թաթերը բերեց,
Յեվ քմծիծաղով
Ճեղքի մեջ զրեց:

Մարդը զարկեց՝ սեպը թռավ,
Իսկույն փակվեց ծառի ճեղքը,
Ու վազրը խեղճ կատու դառավ
Յեվ եղ ճեղքում քաշեց մեղքը...

Մարդը կացինն առավ ձեռին՝
Տո՛ւր, թե կտաս հսկա վազրին.
Վազրը ֆնչաց
Ու մըմնջաց.
— Նոր հասկացա, ցեղակից, քեզ՝
Մարդու հանդեպ, թե դու, թե յես
Չնչին բան ենք,
Խեղճ ու անգոր,
Մարդն իր խելքով
Մեծ ե, հզոր...

Վազրն ասաց.
Ուժից ընկած՝
Կախեց դունչը
Փչեց շունչը...

Իսկ են կողմից
Խելոք կատուն
Նայեց մարդուն՝
Փպտաց թագուն.
Մսի մի ճոթ
Պոկեց, տարավ,
Մոմռալով
Անուշ արավ:



7. ՄԵՐ ԵՇԸ

Մենք ունեյինք մի մեծ եշ,
 Բայց ափսոս, վոր շատ եր գեշ.
 Պոչը պոլատ, բաշը դողար,
 Փորը մեծ եր, մեջքը լղար
 Աչքեր ուներ չանաղ, չանաղ,
 Կերածն եր փուշ և սպանաղ:
 Իսկ վոր քուչում մոխիր տեսներ՝
 Կըզոզուար ու կնստեր...
 Հարգանք ուներ հորս մոտը,
 Բայց կորել եր հետի վոտը:
 Հերս գնեց մի շիշ գինի,
 Վարպետ կանչեց, վոտ շինի:
 Վարպետն արագ
 Առավ ուրագ,
 Գտավ մի չոր կաղամբի կոթ,
 Տաշեց, շինեց մի սիրուն վոտ.—
 Դրեց կորած վոտի տեղը,
 Հեծավ, քշեց մոտիկ գեղը,
 Վոր ստուգի և իմանա
 Վոտը բեռի կըզիմանա...
 Բայց մի կողքը քիչ կախում եր,
 Ու քայլելիս նսւրը կաղում եր...



8. ՃԱՆՃՆ ՈՒ ՄՐՁՈՒՆԸ

Ինչպես չեղավ
 Ինչպես յեղավ
 Թռչուն, շրջուն
 Ճանճ ու մրջուն
 Իրար գտան
 Վեճի մտան:—
 — Ուխտյ, ուխտյ, ո՞վ կա ինձ պես
 Հարգի, խելոք և լավատես.—
 Ի՞նչ տեղ ասես, վոր չեմ շրջում,
 Ի՞նչ հյուսթերով ինձ չեմ թրջում.
 Մեկ ե ինձ մոտ պալատ ու հյուղ՝
 Ներս եմ մտնում յես անյերկյուղ
 Սրան, նրան դեն եմ բոթում,
 Ամաներում քիթս խոթում,
 Թռչում տղղում ու վազվզում,
 Իսկ յերբ քեֆս խաղ ե ուզում
 Զվարճանքի են լավ պահին,
 Յերբ բազմում ե արքան զահին,
 Թեվիս տալիս
 Վեր եմ գալիս
 Ուղիղ նրա
 Դեմքի վրա:
 Նա հաճույքով
 Կանաչ ճյուղքով
 Քշում ե ինձ

Իր յերեսից:
 Իսկ յես, իսկ յես,
 ժիր, աներես՝
 Ել եմ անում
 Ու հիանում:
 Յեվ որն ի բուն,
 ժիր ու խնդուն,
 Հովի հեվով
 Թեթեվ թևով
 Խանութ մտնում
 Միրգ եմ գտնում:
 Իմ վեց թաթով
 Ու կնճիթով
 Հյութ եմ հանում,
 Անուշ անում:
 Ու անցնում ե կյանքս եսպես
 Շէն, վայելուչ, լի մշտապես...
 Իսկ քեզ գալով՝
 Խեղճ, ես հալով
 Որ ու ցերեկ
 Յերկու, յերեք
 Յորեն դատում
 Են ես ուտում:
 Քեզ հարազատ
 Արտերից զատ,
 Ո՞ւր ես հասնում,
 Ո՞ւմ ես տեսնում.
 Կյանքի հաճույք
 Ուրախ խնճույք
 Չկա քեզ մոտ...
 Ամսթ, ամսթ»:

Մըջունն ասավ.
 Թափառում ես, գոմ ու փարախ,
 Տարածում ես, փարակ, թարախ:
 Եղերն անգամ քեզ տեսնելիս
 Իրենց պոչն են իրար տալիս,
 Վոր վախ զգաս,
 Ու մոտ չգաս:
 Մարդիկ գնում
 Դեղ են գնում,
 Զրով թրջում
 Չեղ են ջնջում...
 Ես չե՞ք տեղով,
 Ես չե՞ք ցեղով.
 Այ դուք ծույլեր,
 Կեղտի դույլեր.
 Կուղեք՝ ընկեք ձոր ու քարափ՝
 Ել տեղ չունի մարդը պարապ.
 Դե սուս կացի
 Լավ իմացի՝
 Ով աշխատի
 Նա յեւ կուտի...
 Յերբ ձմեռը յես ինձ համար
 Ապրում եմ տաք բնում հարմար՝
 Դու սառչում ես
 Ու կառչում ես
 Փռած կոճղի,
 Կամ մի ճղի.
 Սպասում ես
 Ու ասում ես՝
 Արի, արի
 Գարուն բարի,

Վոր սաղանանք
Ու չաղանանք...
Մըջունն ասավ՝ թեթևացավ,
Ճանճն ամոթից թռավ, փախավ:




9. ՃԱՂԱՏ ԱՍՊԵՏԸ

Կովի վարպետ՝
Մի քաջ ասպետ
Գլխին դրած կեղծ ծամեր,
Մի որ գինված
Վորսի ցնաց՝
Շրջեց արտեր ու խամեր:
Ծեր ծմակից
Ծառի տակից
Փախավ թեթև այծյամը,
Ու գիծ քամին
Են լավ ժամին
Տարավ նրա կեղծ ծամը: —
Ու պսպղաց
Իր գանգը բաց —
Վորսորդները խնդացին,
Իսկ ասպետը
Մեր սրտաբաց
Կատակ տվեց առանձին: —
— Յերբ սեփական
Իմ մազերը
Չդիմացան գլխիս շատ,
Ո՞ւր մնաց թե
Կեղծ ծամերը
Միշտ մնային հարազատ»:



10. ՔԱՂ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Վոնց պատահեց՝ մի անգամ
 Խուլն ու կույրը բարեկամ
 Պատահեցին մի կաղի
 Ու գնացին արաղի:
 Հասան սարի փեշերը,
 Վրա տվեց գիշերը,
 Չեր յերևում ել գյուղը
 Ու պաշարեց յերկյուղը:
 Կույրը, վոր տասը տարում
 Իսկի լույս չեր նշմարում՝
 Թե—տղերք, մարդ ե գալիս,
 Հրեն գենք ե ցույց տալիս»:
 Խուլը—հա՛ ճիշտ ե ասում՝
 Մարդու շշուկ եմ լսում»:
 Կաղն ել—վա՛յ, վեր եք, փախչենք,
 Թե չե գուր տեղ կրկորչենք»:
 — Անիծածներն հարամի
 Կթալանեն մեզ հիմի.
 — Ի՞նչ եք կայնել ավարա՛
 Կաղլիկ, դու քու ճարն արա՛:



11. ՍՈՒՏ (ժողովրդական)

Բարի պապս
 Մի տարի
 Ինձ նվիրեց
 Հինգ գարի:
 Դուրս հանեցի
 Արորը
 Լծեցի մեր
 Աքլորը:
 Սաղ հողերը
 Վարեցի,
 Եղ հինգ գարին
 Ցանեցի:
 Հենց վոր յեկավ
 Նոր մարտը՝
 Ծունկս եր հասնում
 Իմ արտը...
 Հնձին արտս
 Հնձեցի,
 Հորս կալում

Կախեցի՜.
Յեղած գարին
Մաղեցի,
Տարա քաղաք՝
Ծախեցի,
Թուղթ ու մատիտ
Գնեցի,
Ու ես սուտը
Գրեցի:




12. ՆԱՊԱՍՏԱԿԻ ԲԱԺԻՆԸ

Մի խումբ գազան
Անտառ հասան.
Արջին բնից
Դուրս հանեցին,
Մաս-մաս արին,
Բաժանեցին:
Վորտից վորտեղ՝ նապաստակը
Յեկավ, արջի մեկ աղանջը
Կռացրեց թաթի տակը,
Ուզեց ուժով պոկի, տանի,
Ձագերի հետ անուշ անի:
— Այ դու չղիկ, վճռ տեղից ես,
Վորսկանների վճռ ցեղից ես,
Վորս անելիս քեզ ո՞վ տեսավ»:
— Ի՞նչ եք խոսում,—
Շղթիկն ասավ,—
Են յես չեյի՞ դուրս խրկեցի՜
Արջին ձեր մեջ ուղարկեցի՞...»:
Հավ եր՝ տեսան
Վոնց ե փչում՝
Քեֆներն եկավ:—
Բաժնի վերջում
Արջի աղանջն են ահաղին
Նվիրեցին նապաստակին:



13. ԿՐԿԵՍԻ ՎԱՐՍԱՎԻՐԸ

Փիղը կռպիտ, ահագին,
 ձերմակ շապիկը հագին,
 Յեկավ, կանգնեց մեյդանում. —
 Տեսեք թե ինչ ե անում. —
 Պարանոցը,
 Ակնոցը,
 Յերկար քիթը՝
 Կնճիթը
 Գործի դրել, հոտ քաշում
 Ու յերես ե թրաշում...
 Մտիկ արա, Արշավիր,
 Սրանից լավ վարսավի՞ր...



14. ՁՈՒԿՆ ՈՒ ԲԱԴԸ

Գետում զարկեց մի ալիք,
 Ձկանն արավ խաղալիք՝
 Հանեց նետեց ցամաքը
 Ավազ կիտեց քամակը:
 Ձուկը դես դեն թալրտաց՝
 Ասես գնդակ շարտած,
 Բերանն արավ բաց ու խուճի
 Ու ձեն տվեց, — հուպ, հուպ, հուպ —
 Բադ են ջուրը չդարձավ,
 Վոր ինձ թողեց ու անցավ»:
 — Մեզ վոր մորթեն՝
 Սաղանանք,
 Առաջվա պես
 Ձաղանանք —
 Են ժամ քեզ մոտ
 Ել նորեն
 Ձուրը կգա
 Ինքնիրեն: —
 Պատասխանեց բաղիկը՝
 Որոր-շորոր տատիկը:



15. ՄՐՏՈՏ ՃՈՒՏԸ


Պուճուր ճուտը
 Կերավ կուտը:
 Հավաթառին
 Պառավ Զառին
 Քշեց տարավ
 Ու գոմն արավ:
 Մեծ հավերը
 Թռան վերը:
 Ճուտն ել իրա
 Ուժի վրա
 Հույս գնելով՝
 Սիրտ անելով
 Թռավ կեսը՝
 Ընկավ փոսը...
 — Ի՞նչ ես ընկել
 Ու կշկշում,
 Մանգալ չիտես՝
 Թա՞ն ես թռչում»:



16. ՔԱՋ ԱՔԼՈՐԸ

Հեծանիվը աջ թևից
 Սուրաց, ճամփից քիչ զատվեց,
 Իսկ աքլորը առջևից
 Թպրտալով ազատվեց:
 Դարձավ ասավ.
 «Հավիկս,
 Տեսա՞ր ինչքան սրտոտ եմ»:
 Հավը թե «հա,
 Լավիկս,
 Առանց այդ ել՝ քեզ պիտեմ.
 Ճիշտ ե՛՛ չորս գազ
 Դու վեր թռար,
 Բայց իսկի յեւ
 Զվախեցար»:





Անվախ գորտը,
Վրեն քաշեց
Ջրի մորթը:

17. ԳՈՐՏՆ ՈՒ ԿԿՈՒՆ

Գորտն իր աչքերը չռած
Տաքուկ լճում կռկռաց.
Կկուն ծառից նկատեց,
Իջավ նրան նախատեց.
— Բոլ չի՞ կռաս,
Անզգամ,
Ես ել քանի
Մի անգամ
Հավք ու գազան
Միասին
Թքում ենք քու
Յերեսին...»:
— Ինչքան կուզեն թող թքեն
Ու քթները վեր դքեն՝
Նրանց թուքը լճի ջրից
Ավել չի
Ու իմ սիրտն ել դրա համար
Ցավել չի, —
Ջուղաբ* տվեց



* Ջուղաբ — պատառխտն (ջուղաբ) — Լուր:

Ց Ա Ն Կ

	ԿՁ
1. Աբոն	3
2. Ջանու պարը	16
3. Ծխոն ու ծիծառը	18
4. Անհաղթ եղը	23
5. Արջն ու աղվեսը	33
6. Վաղրն ու կատուն	35
7. Մեր եղը	40
8. Ճանճն ու մրջյունը	41
9. Ճաղատ առպետը	45
10. Քաջ ճամբորդներ	46
11. Սուտ	47
12. Նապաստակի բաժինը	49
13. Կրկեսի վարսավիրը	50
14. Ջուկն ու բաղը	51
15. Սրտոտ ճուտը	52
16. Քաջ աքլորը	53
17. Դորան ու կկուն	54

ՀՀ Ազգային գրադարան



NL0402351

45539

ԳԻՆԸ 1 Ռ. 80 Կ.

Н. НАЗАРЯН
БАСНИ И БЕСЕДЫ
Гиз Арм. ССР, Ереван, 1949